Պատմություն և մշակույթ 2024 № 21 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2024.21.2.398

Yu. Antonyan, H. Muradyan, L. Gabrielyan, A. Safaryan - Review of the collective monograph "Between Imperial and Post-Imperial: The development of the Armenian Religious Landscape in the 20th Century"

Hranush Kharatyan
https://orcid.org/0000-0003-4762-6409
Leading specialist of the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia, candidate of historical sciences
hkharatyan@gmail.com

Keywords: religion, landscape, diversity, imperial, Soviet, post-Soviet.

The review is discussing the collective monograph "Between Imperial and Post-Imperial: The development of Armenia's Religious Landscape in the 20th Century," published in 2023 and consisting of ten chapters. The authors of the book are Yu. Antonyan, G. Muradyan, L. Gabrielyan, and A. Safaryan. The study examines religious processes in the territory of modern-day Armenia that have shaped the Armenian cultural landscape from the imperial period to the era of independent Armenia.

Various chapters of the book analyze Armenia's religious diversity during the imperial, Soviet, and post-Soviet periods, including transformations in the religious and cultural identity of Armenian Catholics, Evangelicals, several ethno-religious communities (Molokans, Assyrians, Yezidis), as well as representatives of new religious movements.

The book offers a fresh perspective on religious developments over the past two centuries, raising important questions that could spark scholarly debates among specialists and the wider public alike.

Անտոնյան Յու., Մուրադյան Հ., Գաբրիելյան Լ., Սաֆարյան Ա. «Կայսերականի և հետ-կայսերականի միջև. հայաստանյան կրոնական լանդշաֆտի զարգացումները 20-րդ դարում» կոլեկտիվ մենագրության գրախոսություն

Հրանուշ Խառատյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար մասնագետ,
պ. գ. թ.

Հիմնաբառեր՝ կրոն, լանդշաֆտ, բազմազանություն,

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 398-403.

Received: 21.09.2024
Revised: 06.10.2024
Accepted: 20.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

կայսերական, սովետական, հետխորհրդային։

Գրախոսականը անդրադառնում է 2023 թ. լույս տեսած և 10 գլուխներից բաղկացած Յու. Անտոնյանի, Հ. Մուրադյանի, Լ. Գաբրիելյանի և Ա. Սաֆարյանի «Կայսերականի և հետ-կայսերականի միջև. հայաստանյան կրոնական լանդշաֆտի զարգացումները 20-րդ դարում» կոլեկտիվ մենագրությանը, որտեղ հեղինակների կողմից անդրադարձ է կատարվում այսօրվա Հայաստանի Հանրապետության տարածքում կրոնական զարգացումներին, որոնք ձևավորել են հայաստանյան մշակութային լանդշաֆտը կայսերական ժամանակներից ի վեր մինչև անկախ Հայաստանի ժամանակաշրջանը։ Գրքի տարբեր գլուխներում քննարկվում է կայսերական, խորհրդային ու հետ-խորհրդային շրջաններում Հայաստանի կրոնական բազմազանությունը ներկայացնող հայ կաթոլիկների, ավետարանականների, մի շարք էթնո-կրոնական համայնքների /մոլոկանների, ասորիների, եզդիների/, ինչպես նաև նոր կրոնական շարժումների ներկայացուցիչների կրոնա-մշակութային փոխակերպումները։ Գիրքը վերջին երկուհարյուրմյակների կրոնական զարգացումների համար նոր հայացք է առաջարկում, անում է կարևոր հարցադրումներ, որոնք կարող են գիտական բանավեճեր առաջացնել թե՛ մասնագետների, թե՛ լայն հասարակության շրջանում։

Антноян Ю., Муратян Х., Габриелян Л., Сафарян А., Рецензия на коллективную монографию «Между имперским и постимперским: Развитие армянского религиозного ландшафта в XX веке»

Грануш Харатян
Ведущий научный сотрудник Института археологии и этнографии Национальной академии наук Республики Армения, кандидат исторических наук

Ключевые слова: религиозный, ландшафт, многообразие, имперский, советский, пост-советский.

Рецензия посвящена коллективной монографии «Между имперским и постимперским: Развитие религиозного ландшафта Армении в XX веке», опубликованной в 2023 году и состоящей из 10 глав. Авторами книги являются Ю. Антонян, Г. Мурадян, Л. Габриелян и А. Сафарян. В работе рассматриваются религиозные процессы на территории современной Республики Армения, которые сформировали армянский культурный ландшафт начиная с имперского периода и до эпохи независимой Армении.

В различных главах книги анализируется религиозное многообразие Армении в имперский, советский и постсоветский периоды, включая трансформации религиозно-культурной идентичности армянских католиков, евангелистов, ряда этнорелигиозных общин (молокан, ассирийцев, езидов), а также представителей новых религиозных течений.

Книга предлагает новый взгляд на религиозные процессы последних двухсот лет, поднимает важные вопросы, способные вызвать научные дискуссии как среди специалистов, так и в широких общественных кругах.

* * *

10 գլխից բաղկացած այս գրքի վերնագրի «կայսերական» բառը վերաբերում է ցարական Ռուսաստանին և ընդգրկում է 1828-1918 թթ. ժամանակաշրջանը, այսինքն այն 90 տարիները, երբ Արևելյան Հայաստանը պարսկական կայսրությունից անցավ ռուսական կայսրության ենթակայության, իսկ «հետ-կայսերական» բառը՝ 1921 թ. հետո ընկած՝ Հայաստանի Հանրապետության անկախության շրջանին: Այլ կերպ ասած, վերնագրից դատելով՝ պետք էր սպասել, որ գրքում քննարկվում են ԽՍՀՄ շրջանի հայաստանյան կրոնական լանդշաֆտի զարգացումները խորհրդային շրջանի 70 տարիներին՝ այսինքն 1920 -1991 թթ.: Իրականում գրքի մի շարք գլուխներում զգալի ծավալ են կազմում ինչպես կայսերական շրջանի կրոնական կյանքի զարգացումները /գլուխ 1/, այնպես էլ ետ-կայսերական՝ անկախ Հայաստանի կյանքի որոշ կրոնական գործընթացներ: Դա բնական է, քանի որ մի կողմից կայսերականի կրոնական քաղաքականությունը զգալի չափով ձևավորել էր այն կրոնական լանդշաֆտը, որը պիտի հաղթահարեր կամ վերաձևավորեր ԽՍՀՄ կրոնական և հակակրոնական/աթեիզմի ներդրման քաղաքականությունը, մյուս կողմից ԽՍՀՄ կրոնական և հակակրոնական քաղաքականությունը 70 տարիների ընթացքում այնքան լրջորեն էր ազդել ԽՍՀՄ, այդ թվում Հայաստանի բնակչության դարերով ձևավորված կրոնական կյանքի վրա, որ 1990-ականներին անկախացած հանրապետություններում, այդ թվում Ռուսաստանի Դաշնությունում, «կրոնական կյանքի» բուռն զարգացումներ սկսվեցին ինչպես կրոնական ինստիտիցիոնալ կառույցների, կրոնական համայնքների, հասարակական տարատեսակ խմբերի կողմից և դրանց միջև, այնպես էլ վերընձյուղվեցին/վերարտադրվեցին և նույնիսկ նոր զարգացումներ ունեցան ժողովրդական կրոնական ըմբռնումների և պրակտիկաների մոռացված, թաքնված կամ հայտնի ձևեր: Այս գրքի գլուխ 6, 8, 9-ում, մասամբ՝ գլուխ 7, 8, 10-ում քննարկվում են գլխավորապես ետխորհրդային շրջանի իրողություններ: Սա, սակայն, չի հակասում գրքի վերնագրի «Կայսերականի և հետ-կայսերականի միջև» սահմանափակմանը, քանի որ ետխորհրդային կրոնական զարգացումներն ըստ էության արտածված են խորհրդային քաղաքականությունից, մեծ չափով ընդհանուր են ԽՍՀՄ-ից «դուրս եկած» բոլոր ժողովուրդների համար և նույնիսկ ԽՍՀՄ կրոնական քաղաքականության դեմ զարգացումներում զգալիորեն կրում են հենց այդ շրջանի կնիքը:

Գրքի ներածությունում և առաջին գլխում կայսերական/ցարական Ռուսաստանի կրոնական քաղաքականությունը Հարավային Կովկասում, գլխավորապես Հայաստանի օրինակով, բնութագրվում է որպես սահմանային տարածաշրջանը կայսրության համար ֆրոնտիր ձևավորելու քաղաքականության մաս: Սկզբունքորեն համաձայնվելով այս բնութագրմանը, կարևոր եմ համարում «հիշեցնել», որ մինչև ռուսական կայսրությանը կցվելը Հայաստանն արդեն ֆրոնտիր էր մեկ այլ՝ Ղաջարական Պարսկաստանի կայսրության կազմում: Կրոնական զարգացումների իմաստով այլ խնդիր է, որ իսլամական և քրիստոնեական կայսրություններից յուրաքանչյուրն առհասարակ տարբեր կրոնական քաղաքականություն ուներ իր ֆրոնտիրներում, այդ թվում՝ ֆրոնտիրների բնակչության կրոնական կազմից ելնելով: Այս իմաստով Արևելյան Հայաստանի բնակչությունը «ֆրոնտիրային փորձ» ուներ և մի կայսրության ֆրոնտիրից մյուսի ֆրոնտիրը դառնալով՝ ադապտացվում էր նոր կայսրության կրոնական քաղաքականությանը՝ ոչ միայն կայսրության համակարգված քաղաքականությանը ենթարկվելով, այլև իր էթնիկական և կրոնական տեղը գտնելու ձևեր էր փնտրում: Այս գործընթացին, որը հայկական աղբյուրներում և

վերլուծական գրականության մեջ այս կամ այն չափով առկա է, ցավոք հատուկ անդրադարձ չկա: Այս գործընթացին նվիրված առաջին գլխում իսկապես միայն «ընդհանուր նկատառումներ» են, ինչպես և գլխի վերնագիրն է՝ «Կրոնական բազմազանությունը Հարավային Կովկասում ու Արևելյան Հայաստանում կայսերական ժամանակներում. **ընդհանուր նկատառումներ»: «Ընդհանուր նկատառումներն»** իրենց հերթին խարսխված են կայսրություններին բնորոշ քաղաքականություններին՝ ցարական կայսրության օրինակով, որը զգալիորեն ուսումնասիրված է, և որը հեղինակը հաջողությամբ «տեղադրում է» Հայաստանի կրոնական լանդշաֆտի ձևավորումներում:

Այս բաժնին հաջորդող խորհրդային շրջանի կրոնական քաղաքականության վերլուծությունը և դրանում Հայաստանի Հանրապետության առանձնահատկությունը գլխում դիտարկվում են ինչպես 1920-30-ականների անզիջում, հաճախ՝ ագրեսիվ հակակրոնական պայքարի դրսևորումները Հայաստանում, այնպես էլ այդ քաղաքականության դրսևորումների նկատմամբ Հայաստանի իշխանությունների քողարկված մեղմացումների փորձերը ի դեմս կրոնական կառույցների պաշտպանության փորձերի, պատմամշակութային հուշարձայնացման, բնակչության գաղտնի և քողարկված կրոնական պրակտիկաները հնարավորինս շրջանցելու ելն: Լավ կլիներ, իհարկե, որ այս փուլը վերլուծելիս աշխատանքում արտացոլվեր 1915 թ. Ցեղասպանությունից հետո Ռուսահայաստանում հայտնված և «ռուսական ֆրոնտիրին» անծանոթ արևմտահայերի կրոնական վարքի տարբերությունները այդ ֆրոնտիրին արդեն ծանոթ և թույլատրելիի սահմաններն իմացող արևելահայերի կրոնական վարքից, սակայն դրա բացակայությունից գլխավոր հարցադրումների օբյեկտիվությունը չի փոխվում:

Հեղինակը հաջողությամբ անդրադառնում է Երկրորդ աշխարհամարտի շրջանի ԽՍՀՄ կրոնական մեղմացումների հայաստանյան դրսևորումներին, ապա՝ խրուշչյովյան շրջանում վերաբացված և կրոնական ծառայությունների մատուցման իրավունք ստացած եկեղեցիներին և վանքերին: Սրանք դիտարկվում են կրոնի և կրոնականության նկատմամբ ԽՍՀՄ ներքին քաղաքականության համատեքստում: Կրկին՝ լավ կլիներ, իհարկե, խնդիրը դիտարկել նաև ԽՍՀՄ արտաքին քաղաքականության դիտանկյունից: Մասնավորապես ուշագրավ է էկումենիկ՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին /ԵՀԽ/ անդամակցելու հրավերին ՀԱԵ-ի դիրքորոշման թեման: ԵՀԽ 1948 թ. Ամստերդամի համագումարին մասնակցելու Կազմակերպիչ կոմիտեի հրավերին Հայ Եկեղեցին ուղղակիորեն չի պատասխանում, բայց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ Չորեքչյանի գլխավորած պատվիրակությամբ նույն թվականին մասնակցում է Ուղղափառ Եկեղեցիների գահակալների ժողովին, որում միանում է Ռուսաց Պատրիարք Ալեքսի Ա Սիմանսկու գլխավորած Ուղղափառ ութ Եկեղեցիների մոսկովյան մերժողական հայտարարությանը: Սակայն «1961 թ. ԵՀԽ-ին անդամակցում են Ռուս Եկեղեցին ու նախկին Խորհրդային Հանրապետություններում գործող Ուղղափառ Եկեղեցիներից շատերը», և 1962 թ. Էջմիածնի «դիրքորոշումը» փոխվում է՝ Վազգեն Առաջին կաթողիկոսի գլխավորությամբ այն դառնում է ԵՀԽ անդամ[1]: Սա, իհարկե, «դիրքորոշման» խնդիր չէր, այլ քաղաքական որոշման: Մի բան է, որ ՀԱԵ-ն էկումենիկ շարժումով հետաքրքրվում էր դեռևս 19 դ. վերջերից, այլ բան է, թե

[1] Հովակիմ վարդապետ Մանուկյան, Էկումենիկ շարժումը 20-րդ դարում և Հայ եկեղեցու անդամակցությունն այս շարժմանը, - https://arar.sci.am/Content/252673/file_0.pdf

ինչպիսին կարող էր լինել ՀԱԻ-ի անդամակցությունն արդեն ռուս ուղղափառ եկեղեցուն ընդունած ԵՀԽ-ում՝ ԽՍՀՄ-ի համար: Սա լավ օրինակ է որպես «հավասարների մեջ» գլխավոր «հավասարի» ԽՍՀՄ կայսերականության դրսևորում, ինչը տպագրության ներկայացված գրքում հաջողությամբ վերլուծված է՝ հաջողությամբ ցույց է տրված «հավասարների մեջ» «ենթակա հավասարների» ուղղակի կախվածությունը քաղաքական կենտրոնից:

Գրքի տարբեր գլուխներում այնուհետև քննարկվում են Հայաստանի կրոնական բազմազանությունը ներկայացնող առանձին թեմաներ խորհրդային և ետխորհրդային շրջանում, մասնավորապես ա/ հայ կաթոլիկների, ավետարանականների, էթնո-կրոնական համայնքների՝ ռուս մոլոկանների, ասորիների, եզդիների կրոնական մշակույթների զարգացումների օրինակներով, բ/ Կրոնական մշակույթի փոփոխությունները ՀԱԵ-ի հետևորդների շրջանում («Խորհրդային շրջանի աղբյուր-հուշարձանները և ժամանակակից խաչքարային մշակույթի ծնունդը», «Խորհրդային և հետխորհրդային շրջանում մշակութային կառույցների փոխակերպումները. մշակույթի պալատներ և հայորդյաց տներ») ևն:

Գրքի գլուխ 6-ում քննարկվում է «Հետ-աշխարհիկության դարաշրջանի կրոնական լանդշաֆտի առանձնահատկությունները Հայաստանում» շատ լայն կոնտեքստում՝ արդեն ավանդական և ետխորհրդային շրջանում Հայաստանում ձևավորված և ներմուծված տարատեսակ կրոնական խմբերի օրինակով՝ իրենց որպես «հեթանոսներ» դիրքավորած «հայկական մշակույթի անաղարտության» ջատագովների, տարատեսակ արևելյան կրոնական ուսմունքների և պրակտիկաների հետևորդների՝ յոգա, լամաիզմ, կրիշնայիզմ ևն:

Կարծում եմ, որ աշխատանքը հաջողված է, և այս գիրքը Հայաստանի վերջին երկու հարյուրամյակների կրոնական զարգացումների և բնութագրերի համար նոր հայացք է առաջարկում՝ դիտարկել և բնութագրել Կովկասի հայկական կրոնական աշխարհը իր դինամիկ բազմազանության մեջ: Որոշ իմաստով սա մարտահրավեր է, և գրքի տպագրությունը կարող է հաջողված կամ ոչ այնքան հաջողված բանավեճեր առաջացնել ինչպես վերլուծաբանների, այնպես էլ՝ Հայաստանի հասարակության մեջ: Իմ անձնական պատկերացմամբ վիճարկելի է գրքում քանիցս կրկնված այն վավերացումը, որ գոյություն ունի «Հայաստանի կրոնական ու, հետևաբար մշակութային միասնականության ու միատարրության մասին առասպել», որը կաղապարում է հանրային ընկալումները: Հեղինակները գտնում են, որ «բազմազանությունը մշտական ու քարացած չէ, այլ ժամանակի ու, հատկապես, պատմական զարգացումների, սոցիալական համակարգերի ու քաղաքական ռեժիմների հետ միասին անընդհատ փոփոխվող իրողություն է»: Համաձայն լինելով այս վերջին հաստատման հետ, ավելորդ չեմ համարում պնդել, որ պատմության ընթացքում թե՛ հայերի, թե՛ Հայաստանի կրոնական բազմազանությունը երբևէ չի մերժվել: Բազմաթիվ հետազոտություններ կան հարյուրամյակներ շարունակ թե՛ հարավային Կովկասը, թե՛ մասնավորապես Հայաստանը և հայ ժողովրդին ալեկոծած քաղկեդոնիակության և հակաքաղկեդոնիկության առկայության, դրանց զարգացումների, քաղաքական ու մշակութային հակամարտությունների հարցի շուրջ: Նվազ, բայց նույնպես ուշադրություն է դարձվել առնվազն չորս հարյուրամյակ Բյուզանդական կայսրությունում, մասնավորապես հայկական միջավայրում ամենատարբեր մակարդակներով արտահայտված պավլիկյան և թոնդրակյան շարժումներին: Սրանք Հայաստանի միջնադարի շրջանի կրոնական բազմազանության միայն մի մասն են, և սրանք, ինչպես նաև սրանց հանդեպ վերաբերմունքի խնդիրները պատմաբանների

վերլուծություններում կարևոր տեղ են զբաղեցրել: Պակաս կարևոր տեղ չեն զբաղեցրել Հայաստանում իսլամի մուտքի և հետևանքների հարցերը՝ թե որպես պատմա-քաղաքական, թե որպես կրոնական և մշակութային գործոնի: Բազմաթիվ նյութեր և վերլուծություններ կան նաև ուշ միջնադարում հայկական իրականություն մտած կաթոլիկ և ավետարանական ուղղությունների մասին: Անկասկած է, որ սրանք այս կամ այն չափով միշտ պայմանավորված են ընդհանուր հասարակական զարգացումներով, քաղաքական ռեժիմներով, ճիշտ նույն կերպ, ինչպես վերջին 200 տարիների զարգացումները: Այլ խնդիր է, որ այս հարցերը «չեն տեղավորվել» ազգագրագետների, մշակութային մարդաբանների հետազոտական խնդիրներում, սակայն սրանից չի հետևում, որ Հայաստանի և հայերի կրոնական բազմազանության թեման իսպառ շրջանցված է:

Բոլոր դեպքերում ես գտնում եմ, որ «Կայսերականի և հետ-կայսերականի միջև. հայաստանյան կրոնական լանդշաֆտի զարգացումները 20-րդ դարում» կոլեկտիվ մենագրությունը շատ կարևոր հարցադրումներ է անում: Կարելի է համաձայնել կամ չհամաձայնել այս գրքի որոշ հարցադրումների, հատկապես որոշ եզրակացությունների հետ, բայց այն անշուշտ նոր խոսք է կրոնական զարգացումների մասին: